

Հայտարարություն

Դիմորդը ոչ մի հարցով ԵՊՀ ընդունող հանձնաժողով չի այցելում: ԵՊՀ հեռակա ուսուցման ընդունելության քննության և մասնագիտությունների հայտագրման դիմում-հայտը դիմորդները **admission.ysu.am** կայքի միջոցով ԵՊՀ են ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով՝ **ա/թ սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ, սեպտեմբերի 30-ին՝ մինչև ժամը 18:00:** Դիմում-հայտը լրացնելիս ԵՊՀ դիմորդը կարող է նշել մինչև **3 (երեք)** մասնագիտություն, ընդ որում առաջին հայտը գերակայություն ունի մյուս հայտերի նկատմամբ, այսինքն մյուս հայտերի մրցույթին դիմորդը մասնակցում է միայն այդ մասնագիտություններում թափուր տեղերի առկայության դեպքում:

ԵՊՀ դիմորդները մասնագիտությունների լրացման հետ կապված խորհրդատվություն ստանալու են հեռախոսագրույցի միջոցով (**Հեռ. 060 710 777**) ժամը **10:00-ից մինչև 17:00, սեպտեմբերի 30-ին՝ մինչև ժամը 18:00**, առանց հանգստյան և տոն օրերի: Քննությունները կանցկացվեն **ա/թ հոկտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 15-ը:**

ԵՊՀ հեռակա ուսուցմամբ ընդունվածների ցուցակները կհրապարակվեն մինչև **ա/թ հոկտեմբերի 22-ը ԵՊՀ ysu.am պաշտոնական կայքէջի դիմորդ բաժնում:**

ԵՊՀ հեռակա ուսուցմամբ ընդունված դիմորդները **նոյեմբերի 2-ին** համապատասխան ֆակուլտետի ղեկանատ պետք է ներկայացնեն պահանջվող փաստաթղթերի բնօրինակները: